



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒՄԱՐԶՊԵՏ**

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

15 ապրիլի 2013թ. թիվ 199

**ԼՈՒՈՒՄԱՐԶԻ 2014-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարություն 2013թ. հունվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013թ. գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» թիվ 70-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 14 կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. սեպտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի զարգացման ծրագրերի կազմման ու իրականացման հայեցակարգին հավանություն տալու մասին» թիվ 38 արձանագրային որոշումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Կ ա Ր Գ ա Դ Ր ու մ եմ.

1. Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի մշակման գործընթացը պլանավորելու և համակարգելու նպատակով ստեղծել մարզային զարգացման ծրագրի մշակման համակարգող խումբ՝ համաձայն հավելվածի:

2. Մարզային զարգացման ծրագրի (ՄԶԾ) մշակման համակարգող խմբի ղեկավար Ա.Դարբինյանին՝

1) Սկսել Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի մշակման գործընթացը:

2) Մեկշաբաթյա ժամկետում մշակել և հաստատման ներկայացնել՝ ՄԶԾ-ի մշակման անհրաժեշտ գործառույթների ու միջոցառումների ցանկը և դրանց իրականացման ժամանակացույցը:

3. Մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ս.Խալաթյանին՝

Ապահովել Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի մշակման գործընթացի հրապարակայնությունը:

ՀՀ ԼՈՒՈՒՄԱՐԶՊԵՏ
2013թ. ապրիլի 15
ք.Վանաձոր

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Կ Ա Ձ Մ

Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման
ծրագրի մշակման համակարգող խմբի

- Ա.Դարբինյան - խմբի ղեկավար, ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ
խմբի անդամներ.
- Ա.Մանուկյան - մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
Դ.Մանուչարյան - մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով
վարչության պետ
Հ.Մկրտչյան - մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և
վերլուծության բաժնի պետ
Վ.Հովհաննիսյան - մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով
վարչության ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի
պետ
Ռ.Սարգսյան - մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և
վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ